ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1037-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 1037-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը բխում է ՀՀ դատախազության կողմից 2017 թվականի ընթացքում իրականացված՝ քննությունից խուսափողների նկատմամբ հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման նկատմամբ դատախազական հսկողության վիճակի ուսումնասիրության արդյունքում վերհանված խնդրի լուծման անհրաժեշտությունից: Մասնավորապես, հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման ոլորտը կարգավորող իրավական ակտերի և պրակտիկայի համապարփակ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Հայաստանի Հանրապետությունում հետախուզական աշխատանքները փաստացի իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանությունը: Սակայն, ռազմական ոստիկանության լիազորությունները սահմանող՝ «Ռազմական ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ռազմական ոստիկանությանը հետախուզական աշխատանքներ իրականացնելու լիազորություն չի վերապահում: Մասնավորապես, վերոհիշյալ օրենքի 11-րդ հոդվածը ռազմական ոստիկանությանը վերապահում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների և դատավարական գործողությունների անցկացմանն ու զինծառայողների նկատմամբ կատարվող հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխման, նախականխման, խափանման, հայտնաբերման ու բացահայտման աշխատանքների

իրականացմանն աջակցելու լիազորություն: Այսինքն, ռազմական ոստիկանության լիազորությունները սահմանող իրավական ակտի որևէ դրույթ այս մարմնին քննությունից, դատից, պատիժը կրելուց խուսափող անձանց հետախուզում իրականացնելու լիազորությամբ չի օժտում:

Նման պայմաններում Հայաստանի Հանրապետության դատախազությունը հանդես է եկել նախաձեռնությամբ, որպիսի Հայաստանի Հանրապետության տարածքում հետախուզական աշխատանքներն իրականացվի միայն Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին, որպիսի հնարավոր լինի մինչև 2018 թվականի հունվարի 1-ն ապահովել ռազմական ոստիկանությունից հետախուզական գործերի փոխանցումը Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը: Այս գործընթացն ապահովելու համար Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի կողմից ընդունվել է համապատասխան հրաման, և ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում հետախուզական աշխատանքներն իրականացնում է բացառապես Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության տարածքում Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում անձանց միջպետական հետախուզման հարցերով իրավասու մարմին պետք է լինի միայն Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, քանի որ միայն այդ կերպ հնարավոր կլինի ապահովել առավել արդյունավետություն այս աշխատանքներում:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Նախագիծը նպատակ է հետապնդում ապահովելու, որ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» պայմանագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետությունում որպես իրավասու մարմին հանդես գա միայն Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, քանի որ ռազմական

ոստիկանության լիազորությունները սահմանող իրավական ակտի որևէ դրույթ այս մարմնին քննությունից, դատից, պատիժը կրելուց խուսափող անձանց հետախուզում իրականացնելու լիազորությամբ չի օժտում, և ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում հետախուզական աշխատանքներն իրականացնում է բացառապես Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:

3. Կարգավորման նպատակը և բնույթը

Նախագծով նախատեսված կարգավորման ընդունումը կնպաստի ապահովելու, որ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» պայմանագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետությունում որպես իրավասու մարմին հանդես գա միայն Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, որը ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում հետախուզական աշխատանքներն իրականացնող միակ մարմինն է:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Իրավական ակտի նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից:

5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունումը կնպաստի, որ Հայաստանի Հանրապետությունում «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» պայմանագրի իրականացման համար որպես իրավասու մարմին հանդես գա միայն Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, որն էլ կապահովի վերոհիշյալ խնդիրների լուծումը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1037-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1037-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն առկա չէ:

ՀՀ գլխավոր դատախազություն